ՄԻԱՎ/ՁԻԱՀ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻՆ ՈՒ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՍԵՄԻՆԱՐ

Հոկտեմբերի 13-14-ին Երևանում, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր Սեղան հիմնադրամի և Գերմանական Բողոքական Եկեղեցիների ասոցիացիայի (EED) նախաձեռնությամբ, կազմակերպվել էր «ՄԻԱՎ/ՁԻԱՀ հիմնահարցերը և մարտահրավերները Հարավկովկասյան տարածաշրջանում» թեմայով սեմինար:

Սեմինարի ընթացքին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, ԵՀԽ հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր Սեղան հիմնադրամի, ՁԻԱՀ կանխարգելման հանրապետական կենտրոնի, «Վորլդ Վիժն Արմենիա», UNAIDS-ի և հասարակական ու կրոնական մի շարք այլ կազմակերպությունների ներկայացուցիչները տեղեկացրեցին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ուղղությամբ իրենց կառույցների կողմից իրականացվող ծրագրերի մասին:

Ի թիվս իրագործվող ձեռնարկների մասին տեղեկությունների, ՁԻԱՀ կանխարգելման հանրապետական կենտրոնի աշխատակից Էդուարդ Հովհաննիսյանը հանդես եկավ «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համաճարակը աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագրի իրականացումը» զեկույցով, Բժշկական Առաքելության Գերմանական Ինստիտուտից Սոնյա Վայնրայխը խոսեց ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիմնահարցերի և մարտահրավերների մասին, իսկ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քարոզչական կենտրոնի տնօրեն Տ. Ղևոնդ քհն. Մայիլյանը բանախոսեց «Ապրվածաբանությունը և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը» թեմայով:

Հոկտեմբերի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց սեմինարի կազմակերպիչներին՝ Գերմանական Բողոքական Եկեղեցիների ասոցիացիայից Հարավ-արևելյան Եվրոպայի և Հարավկովկասյան պետությունների ծրագրերի կոորդինատոր Կարոլին Կրուկովին, ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղան հիմնադրամի գործադիր տնօրեն դոկտ. Կարեն Նազարյանին, ինչպես նաև Բժշկական Առաքելության Գերմանական Ինստիտուտից Սոնյա Վայնրայխին:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությանը ներկայացվեցին սեմինարի արդյունքները և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ոլորտում նախատեսվող հետագա ծրագրերը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ